

Ուսում.

Ծնվել 1988թ. Նոյեմբերի 5-ին Կիրովականում: 2005թ.-ին Ոսկե մեդալով ավարտել է Վանաձորի թիվ 28 միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է ԵՊԲՀ դեղագիտության ֆակուլտետ՝ 2010թ. ավարտելով այն գերացանց առաջադիմությամբ: Ուսանողական տարիներին արժանացել է «Дружба» անվանական կրթաթոշակի: 2010-2012թթ.-ին սովորել և գերազանցությամբ ավարտել է ԵՊԲՀ օրդինատուրան՝ ստանալով կլինիկական դեղագետի որակավորում: Օրդինատուրայում ուսումնառության ժամանակ՝ 2011թ.-ին, վերապատրաստման նպատակով մեկնել է Իտալիայի Կամերինո քաղաքի համալսարան:

Աշխատանքային փորձ.

- 01/2009–06/2010 Դեղագետ, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ
- 06/2011–11/2012 Դեղագետ / բժշկական ներկայացուցիչ, «Նիբ Ֆարմա» ՍՊԸ
- 09/01/2012–25/11/2017 Ավագ փորձագետ, «Է. Գաբրիելյանի անվան Դեղերի և Բժշկական Տեխնոլոգիաների Փորձագիտական Կենտրոն» ՓԲԸ
- 30/08/2016–08/10/2020 Համահիմնադիր / Փոխնախագահ, «Երիտասարդ Բժիշկ Գիտնականների Հայկական Միություն» ՀԿ
- 19/10/2016–08/10/2020 Համահիմնադիր / Խորհրդի անդամ, «Կիրաբուժական Ուռուցքաբանության Հայկական Միություն» ՀԿ
- 03/2018–08/10/2020 Նախագահ, «Կլինիկական Դեղագիտության Հայկական Միություն» ՀԿ
- 12/2017–09/2018 Վարչության պետ, ՀՀ Առողջապահական և Աշխատանքի Տեսչական Մարմին
- 02/02/2013–08/10/2020 Դասախոս, Երևանի Միսիթար Հերացու Անվան Պետական Բժշկական Համալսարանի Կլինիկական Ֆարմակոլոգիայի Ամբիոն
- 11/2018/-12/2018 Տեխնիկական գրող / բժշկական գրող, FMD K&L

Հրատարակումների ցանկ

N	Article Title	Publisher/ Year / Pages	Co-authors
1.	(Article in Russian) The effect of 5-hydroxyadamantan-2-one on morphological status of rats' brain tissues in local permanent ischemia	Experimental and Clinical Pharmacology, 76 (6), p. 7-10, 2013	Mirzoayn N.R. Khstikyan N.G. Alikhanyan C.B. Stepanyan A.G. Hakobyan A. A.

	conditions		Kukhtarova A.M. Baghdasaryan N.A.
2.	Anxiolytic effects of 5-hydroxiadamantane-2-on under the conditions of local ischemia of brain in rats	Journal of the Neurological Sciences, 333, doi: 10.1016/j.jns.2013.07.974, p. 252, 2013	Alikhanyan KB. Stepanyan A.G. Hakobyan A.A. Kukhtarova A.M.
3.	The investigation of neuroprotective activity of 5-hydroxiadamantane-2-on in rats under the conditions of local permanent brain ischemia	Journal of the Neurological Sciences, 333, doi: 10.1016/j.jns.2013.07.993, p. 258, 2013	Mirzoyan N.R. Khostikyan N.G. Alikhanyan K.B. Hakobyan A.A. Stepanyan A.G. Kukhtarova A.M.
4.	Cerebrovascular and Neuroprotective effects of Adamantane derivative	BioMed Research International, Volume 2014, Article ID 586501, 2014	Mirzoyan R.S. Gan'shina T.S. Maslennikov D.V. Kovalev G.I. Zimin I.A. Pyatin B.M. Avdyunina N.I. Kukhtarova A.M. Khostikyan N.G. Alikhanyan C.B. Mirzoyan N.R.
5.	The influence of GABA-PgE ₂ Conjugate on brain damage in a model of permanent local ischemia	8 th International Symposium on Neuroprotection and Neurorepair, I-2-4, 2014	Hakobyan A. Bezuglov V. Gretskaya N. Khostikyan N. Alikhanyan C. Stepanyan A. Baghdasaryan N, Mirzoyan N.
6.	The influence of afobazole on llpofuscin level in rat brain under the conditions of new model of local ischemia	8 th International Symposium on Neuroprotection and Neurorepair, I-1-1, 2014	Alikhanyan K. Stepanyan A. Hakobyan A.
7.	(Article in Russian) Morphological changes in brain tissues of rat with local permanent	Experimental and Clinical Pharmacology, 77 (12), p. 10-13, 2014	Baghdasaryan N.A. Khostikyan N.G.

	ischemia model under the action of 2-methyl-6-ethyl-3-hydroxypyridine hemisuccinate		Alikhanyan K.B. Baghdasaryan M.G. Stepanyan A.G. Kukhtarova A.M. Mirzoyan N.R.
8.	(Article in Russian) The influence of Mexidol and 2-ethyl-6-methyl-3-hydroxypyridine hemisuccinate on the level of lipofuscin in rat brain tissue under the conditions of local permanent ischemia.	Experimental and Clinical Pharmacology, 78 (8), p. 3-6, 2015	Mirzoyan N.R. Baghdasaryan N.A. Alikhanyan C.B. Baghdasaryan M.G. Kukhtarova A.M.
9.	(Article in Russian) The investigation of neuroprotective activity of GABA-conjugate with arachidonic acid under the conditions of local permanent ischemia of rat brain	Experimental and Clinical Pharmacology, 78 (6), 9. 49-53, 2015	Mirzoyan N.R. Khostikyan N.G. Stepanyan A.G. Hakobyan A.A. Alikhanyan C.B. Baghdasaryan N.A. Gretskaya N.M. Bezuglov V.V.
10.	Influence of 5-hydroxyadamantane-2-on on behavioral changes of rats under conditions of local cerebral ischemia	Medical Science of Armenia, 3, p. 61-68, 2015	-
11.	Clinical Pharmacology	Training Manual for Pharmaceutical Faculty Students, Part I, 2015 Chapter 10. Glucocorticosteroids, p. 88	Mirzoyan N.R. Baghdasaryan M.G. Alikhanyan K.B. Stepanyan A.G. Hakobyan A.A.

			Sargsyan S.A. Grigoryan T.S. Ktikyan T.G. Baghdasaryan N.A.
12.	The investigation of anxiolytic effect of adamantane and hidroxypyridine derivatives, and GABA-conjugates in rat model of local cerebral ischemia	Current Issues of Medical Science Conference towards the 95th anniversary of YSMU, page 20, 2015	Stepanyan A.G. Baghdasaryan N.A. Hakobyan A.A. Alikhanyan K.B. Baghdasaryan M.G. Mirzoyan N.R.
13.	(Article in Armenian) The investigation of anxiolytic effects of 5- The investigation of anxiolytic effects of 5-hydroxyadamantane-2-on, GABA-conjugate with arachidonic acid, GABA-conjugate with PgE2 and 2- ethyl-6-methyl-3-hydroxypyridine hemisuccinate under the conditions of local permanent ischemia of rat brains	Medicine, science and education, N 21, p. 14,9-154, 2016	Stepanyan A.G. Baghdasaryan N. A. Hakobyan A.A. Alikhanyan C.B. Baghdasaryan M.G. Mirzoyan N.R.

Օրդինատորան ավարտելուց հետո Վահեի երազանքն էր Հայաստանում զարգացնել կլինիկական ֆարմացիան և այդ նպատակին հասնելու համար իր ընկերների հետ միասին հիմնեցին «Կլինիկական դեղագիտության հայկական միություն» ՀԿ-ն, որի նախագահը և համահիմնադիրը հենց ինքն էր: Օրդինատորան գերազանցությամբ ավարտելուց հետո ընդունվել է ԵՊԲՀ կլինիկական ֆարմակոլոգիայի ամբիոն և դասավանդել է մինչև զորակոչվելը՝ 2018թ.-ի դեկտեմբերը: Ամբիոնում դասավանդելուն զուգահեռ զբաղվում էր նաև գիտական աշխատանքով և 2019թ.-ին պարտրաստվում էր պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը: Հեղինակ է տասից ավել գիտական հոդվածների՝ այդ թվում նաև միջազգային հեղինակավոր պարբերականներում: Ամբիոնի լավագույն դասախոսներից էր. ուսանողները միշտ հիացմունքով են արտահայտվել Վահեի մասին իր բարձր մասնագիտական որակավորման և

բացառիկ մարդկային հատկանիշների համար: Ազատ տիրապետում էր 3 օտար լեզուների՝ ռուսերեն, անգլերեն և իտալերեն: Մանկուց եղել է շատ ընդունակ և հավասարակշռված: Նա արդարության մարտիկ էր և միշտ մասնակցում էր բարեգործական տարբեր միջոցառումների: Հատկապես վերջին տարիներին տարվել էր վազքով. մասնակցում էր գրեթե բոլոր մարաթոններին, որոնք մեծամասամբ բարեգործական էին: Ամեն անգամ բարեգործական վազքի մրցույթին պատրաստվում էր ամենայն պատասխանատվությամբ: Շատ էր սիրում դաշնամուր նվագել, ուներ երաժշտական միջնակարգ կրթության, սակայն նվագում էր շատ բարդ ստեղծագործություններ: Սիրում էր Արամ Խաչատրյանի, Ռիչարդ Կլայդերմանի և Իռոմայի ստեղծագործությունները: Վահեն շատ խելացի էր, բարի, աշխատասեր, չափազանց ընկերասեր և մարդասեր: Մարդ, ով միշտ պատրաստակամ էր օգնության հասնել դիմացինին: Առանց տրտնջալու միշտ հաղթահարում էր բոլոր դժվարությունները և միշտ պայքարում էր արդարության համար: Վահեն պատերազմի առաջին իսկ օրվանից, առանց մեկ րոպե անգամ վարանելու, մեկնել է մարտի դաշտ՝ իր զինակից ընկերներին բժշկական օգնություն ցուցաբերելու: Չինակիցների խոսքով՝ անգամ մարտեր է վարել, քաջալերել է իր ընկերներին: Պատերազմի ընթացքում իր կյանքը վտանգելով՝ հերոսաբար փրկել է մի քանի տասնյակ զինվորների կյանք: Հոկտեմբերի 8-ին՝ հերթական մարտի ժամանակ, արհամարելով վտանգը, նորից նետվել է կյանքեր փրկելու, բայց հերոսաբար զոհվել է թշնամու կողմից: Բոլոր ընկերները, կոլեգաները, դասախոսները միշտ հիացմունքով են արտահայտվում Վահեի մասին և նշում, որ Վահեն բացառիկ մարդ ու մասնագետ էր, ով ունակ էր բեկում մտցնել դեղագիտության բնագավառում:

ՀՀ Նախագահի հոկտեմբերի 16-ի հրամանագրով Հայրենիքի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած խիզախության և անմնացորդ նվիրումի համար Վահե Սամվելի Մելիքսեթյանը հետմահու պարգևատրվել է ՄԱՐՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՂԱԼՈՎ